Ü ² Ê ² ¶ Æ Ì

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

------ ---------- 2010թ. N -----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 224-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական հիմնարկը վերակազմակերպելու մասին» N 224-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) մասնագետների վերապատրաստումը, վերարտակավորումը՝ մասնագիտական որակավորման բարձրացումը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների ծառայողների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը,»։

2. Որոշմամբ հաստատված կանոնադրության 10-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) մասնագետների վերապատրաստումը, վերարտակավորումը՝ մասնագիտական որակավորման բարձրացումը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների ծառայողների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը.»։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 224-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 13-ի N 224-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ինստիտուտ) գործունեության առարկայի և նպատակների հստակեցմամբ։

Ինստիտուտը ստեղծվել է նախարարների խորհրդի 1990թ. հոկտեմբերի 18-ի թիվ 681 որոշմամբ՝ որպես արդարադատության նախարարության իրավաբանական կադրերի որակավորման բարձրացման ինստիտուտ, որը ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 13-ի թիվ 224-Ն որոշմամբ վերակազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության։

Ինստիտուտը ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների ծառայողների վերապատրաստմանը ձեռնամուխ է եղել ՀՀ արդարադատության նախարարության համակարգում քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունների ստեղծման օրվանից (մասնավորապես, ԴԱՀԿ ծառայությունը՝ 1999թ., քրեակատարողական ծառայությունը՝ 2001թ.) և ՀՀ պետական բյուջեով նախատեսված «ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների ծառայողների վերապատրաստում և հատուկ ուսուցում» ծրագիրն իրականացնում է մինչ օրս։

Ինստիտուտի գործունեության առանձնահատկությունները կայանում է նրանում, որ վերջինիս կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացներն իրականացվում են ոչ միայն իրավաբանական ուղղվածության ծրագրերով, այլև մշակվել և ներդրվել են սոցիալական աշխատողի, հոգեբանի և այլ նեղ մասնագետների վերապատրաստման ծրագրեր քրեակատարողական ծառայողների համար, տնտեսագիտական և այլ ծրագրեր՝ հարկադիր կատարման ծառայողների համար։ Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայողների համար մշակվել և իրականացվում են հատուկ ուսուցման՝ վերջիններիս առանձնահատկություններն հաշվի առնված ուսումնական ծրագրեր։

Ինստիտուտի գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացների իրականացման գործընթացում ընդգրկվող դասախոսները վերապատրաստվել են տարբեր երկրներում (մասնավորապես՝ Խորվաթիա, Էստոնիա, Ռուսաստանի Դաշնություն և այլն), ամեն տարի նրանց համար կազմակերպվում են համապատասխան դասընթացներ (ուսուցում ուսուցանողների համար, ToT)՝ միջազգային կամ օտարերկրյա փորձագետների մասնակցությամբ, որոնց ընթացքում նրանց ծանոթացնում են վերապատրաստման և հատուկ ուսուցման անցկացման միջազգային փորձին, դասավանդման նորագույն մեթոդիկաներին և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ պարզ է դառնում, որ ինստիտուտի գործունեության հիմնական առարկան հենց ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման իրականացումն է, որով պայմանավորված էլ առաջարկվում է հստակեցնել ինստիտուտի գործունեության առարկան և նպատակները՝ ՀՀ արդարադատության նախարարության հատուկ ծառայությունների ծառայողների վերապատրաստումն ու հատուկ ուսուցումը ներառելով տվյալ ցանկում: